ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «23-ը» հունվարի 2018թ.
ժամը 11^{20}

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.

- «Կարենօիլ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում (Հավելված 6.1) նշված չեն «Տրանսֆորմատորի յուղի» էլեկտրահաղորդականության վերաբերյալ տվյալները (ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ էլեկտրահաղորդականությունը պետք է լինի 35Կվ-ից բարձր):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցի կողմից ներկայացված շտկման քննարկման վերջնաժամկետի հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Կ. Հակոբյան
Գնահատող	Մ. Խալաթյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան